ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/9

ք. Սպիտակ « 02 » ապրիլի 2020թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լևոն Լևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվայիին փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2 750 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,առանց ԱԱՀ-ի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն վճարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչևկողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններիմի ջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում էՀայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Սպիտակ համայնք	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 900242714021	Հ/Հ 1570063611980100
ՀՎՀՀ 06801433	ՀՎՀՀ 03308717
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Լ. Լևոնյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտությանդեպքումպայմանագրի նախագծումկարողեններառվել՝ՀՀօրենսդրությանչհակասողդրույթներ:

Հավելված N 1
« 02» 04 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	դրամ	2 750 000	2 750 000	1	ք. Սպիտակ, Շահումյան 7	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Սպիտակ համայնքի կենտրոնական հատվածի 17, Ուզբեկական Կ-5 թաղամասի թվով 5 բազմաբնակարան շենքերի բակային տարածքների, Վարպետաց թաղամասից թիվ 8 հիմնական դպրոց տանող ու Վարպետաց թաղամասը Ուզբեկական, Իտալական, Շվեյցարական, Հարավ Արևմտյան թաղամասերին կապող ճանապարհների ասֆալտապատում

Ճանապարհի անվանումը և վերանորոգման ենթակա տեղամասը	Սպիտակ համայնքի կենտրոնական հատվածի 17, Ուզբեկական Կ-5 թաղամասի թվով 5 բազմաբնակարան շենքերի բակային տարածքներ, Վարպետաց թաղամասից թիվ 8 հիմնական դպրոց տանող ու Վարպետաց թաղամասը Ուզբեկական, Իտալական, Շվեյցարական, Հարավ Արևմտյան թաղամասերին կապող ճանապարհներ
Փողոցների ընդհանուր մակերեսը Մայթի ընդհանուր մակերեսը Փողոցների ասֆալտապատման մակերեսը Մայթի կառուցում ասֆալտապատում 1,5մ լայնությամբ	2760քմ* 240քմ* 2760քմ* 240քմ*
Բակերի ասֆալտապատման մակերեսը	5182քմ
Ճանապարհի կարգը	Բնակավայրերի/ համայնքների/ փողոցների ճանապահներ - քաղաքային նշանակության
Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր,երկրորդային, նպատակային կիրառութունը)	Ճանապարհը՝ գլխավոր, նպատակը՝ դպրոցի և թաղամասերի սպասարկման, բակային տարածքները՝ բազմաբնակարան շենքերի և հարակից թաղամասերի սպասարկման
Երթևեկելի մասի լայնությունը	Ճանապարհի համար-6մ, բակային տարածքների համար 6-8մ
Շարժման գոտիների քանակը	երկգոտի
Աշխատանքի տեսակը	Գրունտային ճանապարհների և բազմաբնակարան շենքերի բակային տարածքների ասֆալտապատում
Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը	Կապիտալ, ասֆալտ բետոն
Նախագծմանփուլինախագծանախահաշվային փաստաթղթերիկազմմաննորմատիվայինպահանջները	☐ Աշխատանքային նախագիծ ☐ Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99. նորմերին համապատասխան, ☐ Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան ☐ Նախագծային փաստաթղթերը կազմել համաձայն ԳՈՍՏ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

Հետազոտման վերաբերյալ պահանջներ	□ Ինժեներականհետազոտումնիրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 նորմերիևԳՈՍ 32836-2014-իպահանջներիհամապատասխան՝նախագծայինփաստաթղթերըմշակելուևնախագծայինլուծումներըհիմնավորելուանհրաժեշտծավալով □ Հետազոտմանընթացքումիրականացնելասֆալտապատվողտեղամասերիառկահիրավիճակիտեսանկարահանում
Նախագծի նկատմամբ պահանջներ	Նախագիծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍ-ի պահանջներին: Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները □ Հողային պաստառի վերականգնում □ Ճանապարհային և բակային տարածքների պատվածքի ասֆալտապատում □ Ջրահեռացման համակարգերի կառուցում (ըստ անհրաժեշտության) □ Ճանապահների կահավորում □ Անվտանգության տարրերի իրականացում
Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ԳՈՍ 21.511-83-ի և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝ □ Բացատրագիր (տեղամասի նկարագրի, քարտեզ՝ ասֆալտապատման ենթակա տեղամասի, նախատեսվող շինարարական աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիայի, մեքենա-մեխանիզմների և ինժիներա-տեխնիկական մասնագիտական խմբի կազմերի նշմամբ): □ Ասֆալտաատվող տեղամասի ինժեներաերկրաբանական լայնական և երկայնական կտրվածքներ, ճանապարհային պատվածքի, մայթի կոնստրուկցիաներ և այլն, □ Համահավաք ամփոփագրեր, □ Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը: □ Ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)
Հիմնական ակնկալվող արդյունք	Առաջադրանքի վերջնական արդյունք է հանդիսանալու Սպիտակ համայնքի կենտրոնական հատվածի 17, Ուզբեկական Կ-5 թաղամասի թվով 5 բազմաբնակարան շենքերի բակային տարածքների, Վարպետաց թաղամասից թիվ 8 հիմնական դպրոց տանող ու Վարպետաց թաղամասը Ուզբեկական, Իտալական, Շվեյցարական, Հարավ Արևմտյան թաղամասերին կապող ճանապարհների նախագծանախահաշվային փաթեթները՝ ներկայացված էլեկտրոնային կրիչներով (AutoCAD և PDF ձևաչափերով), և տպագիր (գունավոր)՝ **A3** ձևաչափի, **5** օրինակից: Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) և տպագիր՝ **A4** ձևաչափով **5** օրինակից: **Նախագծային ամբողջ փաթեթը**պետք է պատրաստվի

Աշխատանքների կատարման ժամանակացույցը	Սկիզբը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից Ավարտը՝ 20 օրացուցային օր: Կատարողը ավարտված նախագծերի փաթեթները էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 15 օրացուցային օր հետո: Պատվիրատուն 2 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիտողությունները, որից հետո կատարողը պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով նախագծա նախահաշվային փաթեթները հանձնել պատվիրատուին/էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 3 օրացուցային օր հետո:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ստորև ներկայցվող աղյուսակի ըստ առանձին փողոցների և բակային տարածքների:
Գնային առաջարկները ներկայացնել ըստ փողոցների և բակերի առանձնացված գնառաջարկով:
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ընթացքում այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

h/h	Ասֆալտապատվող տեղամասերի անվանումը
1	Վարպետաց թաղամասից Թիվ 8 հիմնական դպրոց տանող ու Վարպետաց թաղամասը Ուզբեկական, Իտալական, Շվեյցարական, Հարավ Արևմտյան թաղամասերին կապող ճանապարհ
2	Ուզբեկական Կ 5 թաղամասի թվով 5 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ
3	Թորոսյան փողոց թիվ 26 բազմաբնակարան բնակելի շենքի բակային տարածք
4	Ալ.Մանուկյան փողոց թիվ 14 բազմաբնակարան բնակելի շենքի բակային տարածք
5	Ս.Ավետիսյան փողոց թիվ 7/1, 7/2, 7/3, 7/4, 7/5, 7/6, 15/1,15/2, 17/1, 17/2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ
6	Եռանկյունի թաղամաս թիվ 1/1, 1/2, 5 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ
7	Ալ.Մանուկյան փողոց թիվ 5 և 5/2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ

Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի սահմանված կարգով փորձաքննության դրական եզրակացությանը ստանալուց հետո՝10 օրյա ժամկետում:

Նախագծերի տնօրինման իրավունքը պատկանում է Պատվիրատուին:

Ներկայացվող փաստաթղթերը՝

Կատարողը նշված աշխատանքների իրականացման համար հայտի փաթեթում պետք է ներկայացնի

1. Պետական գրանցման վկայականի պատճեն
2. Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիա, ներդիրը տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ)

☐ * չափերը նախնական են և նախագծողի կողմից ենթակա են տեղանքում փաստացի չափագրման

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.
Հ/Հ 900242714021
ՀՎՀՀ 06801433
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570063611980100
ՀՎՀՀ 03308717
Տնօրեն՝ Լ. Լևոնյան

Հավելված N 2
«02». 04 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	0	0	0	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000	2 750 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.
Հ/Հ 900242714021
ՀՎՀՀ 06801433
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570063611980100
ՀՎՀՀ 03308717
Տնօրեն՝ Լ. Լևոնյան

(ստորագրություն) Կ.Տ.